Բարդիս Ալենի ՀԵՔԻԱԹՆԵՐԸ

Մտահղացման հեղինակ՝ Ալենի մայր Նազելի Տերտերյան

Նկարազարդումը՝ Ասյա Ղանդիլյանի

«Ալեն Մարգարյան» բարեգործական հասարակական կազմակերպություն

ԶԱՆԳԱԿ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

ՀՏԴ 821.19-93 Մարգարյան
ԳՄԴ 84(5Հ)
Մ 350

Մարգարյան Ալեն
Մ 350 Բոլորիս Ալենի հեքիաթները / Ա. Մարգարյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2023.— 72 էջ:

ՀՏԴ 821.19-93 Մարգարյան
ԳՄԴ 84(5Հ)

ISBN 978-9939-99-008-8

© Տերտերյան Ն. (կազմելու համար), 2023

«Բոլորիս Ալենի հեքիաթները» գրքում զետեղված են կախարդական և ուսուցողական պատմություններ, որոնք Արցախի հերոս Ալեն Մարգարյանը գրել է մանուկ հասակում:

Գրկի՛ր գիրքը և բացահայտի՛ր հերոսների զարմանահրաշ աշխարհը, փորձի՛ր սիրել այն և դառնալ ԱԼԵՆԻ նման ՄԵԾ ԳՐՔԱՍԵՐ:

QR կոդի միջոցով լսե՛ք հեքիաթները:

ԱՌԱՋԱԲԱՆ

Մի առիթով ռուս մեծ բանաստեղծ, թարգմանիչ և գրականագետ Օսիպ Մանդելշտամը գրել է. «Բանաստեղծություններ կարդալը մեծագույն և դժվարին արվեստ է, և ընթերցողի կոչումը պակաս պատվավոր չէ, քան պոետի կոչումը («Читать стихи – величайшее и труднейшее искусство, и звание читателя не менее почтенно, чем звание поэта»): Հիրավի, այդպես է, և ինչպես կան շնորհալի հեղինակներ, կան և շնորհալի ընթերցողներ: Ալենն այդպիսին է եղել. բացառիկ վերաբերմունք է ունեցել գրականության հանդեպ՝ հիացում ու ակնածանք, և մտերիմների վկայությամբ՝ գիրքը համարել լավագույնը նվերներից:

Եվ ինչպես շատ շնորհալի ընթերցողներ, Ալենն էլ վաղ հասակից փորձել է գրել: Գրելու սերն առհասարակ դեռ գրողի մասնագիտություն ընտրելու որոշում չէ, այլ հետևողական ընթերցանության շնորհիվ ձևավորվող մշակույթ, ազնիվ ձգտում, որ բնորոշ է գրագետ և ընթերցողական ձիրք ունեցող մարդուն, գրավոր արտահայտվելու ուրույն հմտություն, երբեմն էլ՝ անդիմադրելի պահանջ:

Դեռ դպրոցական տարիներից Ալենը գրել է բանաստեղծություններ, պատմվածքներ, առակներ: Պահպանվել են նաև մորը՝ Նազելի Տերտերյանին նվիրված գողտրիկ երկտողեր, ընծայագրեր, հուզիչ նամակներ, խնամքով կատարված դպրոցական շարադրությունների պատառիկներ… Պատանու պայծառ միտքը ստեղծել է հեքիաթային ուրույն երևակայական աշխարհներ, բնակեցրել դրանք կերպարների ներկայանալի անձնակազմով, օժտել նրանց զանազան ձիրքերով, ոմանց էլ շնորհել գերբնական ձիրք:

Ալենի հեքիաթներից է «Կախարդական ծաղիկը», որի հերոսը բնակվում է գետում՝ ջրաշուշանի մեջ, բայց մարդիկ ունեն նրա կարիքը, ուստի անվարան թողնում է իր բուսեղեն կացարանն ու շտապում նրանց օգնության: Մի պայման կա սակայն. բուժվել կարող են միայն նրանք, ովքեր պատրաստ են անվերապահորեն հավատալու կախարդանքին:

Գողտրիկ մի զրույց է «Աշխատասեր մեղուները» հեքիաթը: Բարեսիրտ ու ժիր մեղուներն իրենց պատրաստած մեղրից առատորեն բաժին են հանում նաև ծաղկած պարտեզի մյուս բնակիչներին: Բայց մի օր՝ գիշերով, չար դևը հարձակվում է պարտեզի վրա, ավերում է այն՝ արմատախիլ անելով բույսերն ու այրելով ծառերի ճյուղերը: Մեղուները չեն հուսահատվում. նոր ծաղիկներ են ցանում, ու պարտեզը ծաղկում է՝ առաջվանից էլ ավելի գեղեցիկ:

Հեքիաթներից ամենակարճը «Կակաչի սխալն» է: Կակաչը չի գնահատում արևի լույսն ու ջերմությունը. շարունակ բողոքում է, անձրև անրջում, մինչև մի օր էլ արևը նեղացած հեռանում է, և կակաչը զղջալով խնդրում է նրան վերադառնալ:

Գողտրիկ մի պատմություն է «Տերևը»: Աշնան դառնաշունչ ցրտին փոքրիկ ու քաջ մի տերև չի ուզում ծառին մենակ թողնել, բայց քամին, մեկ է, պոկում է նրան ծառից: Տերևը հայտնվում է փոքրիկ տղայի պատուհանագոգին և աղաչում նրան ներս առնել իրեն: Տղան դնում է տերևը իր գրքի էջերի արանքում, որ նա չմրսի:

Բնույթով խրատական առակ է հիշեցնում «Ընկերությունը» պատմությունը: Ծույլ ու ալարկոտ արջը շարունակ օգտվում է մյուսների բարեսրտությունից ու պատրաստակամությունից. մեղուները սիրով մեղր են տալիս նրան, տանձենին՝ քաղցր պտուղներ, բայց երբ ժամանակ անց ծառը խնդրում է պաշտպանել իրեն թռչուններից, իսկ մեղուները՝ թունավոր սարդից, արջը հրաժարվում է և մնում բոլորովին մենակ՝ առանց ընկերների:

Յուգոդա քաղաքում մի գոռոզ ու հարուստ մարդ է ապրում, նաև՝ մի իմաստուն ողորմած բժիշկ, որ բոլոր աղքատներին անխտիր բուժում է՝ առանց նրանցից գումար վերցնելու («Հարուստն ու իմաստունը»): Մի օր հիվանդանում է նաև մեծահարուստն ու ստիպված է լինում դիմել բժշկին, ում նախկինում ծաղրում էր ու արհամարհում:

«Լեգենդ ամանորյա կախարդանքի մասին» հեքիաթը պատմում է պարահանդե-

սի մասին, որին ամեն տարի պատրաստվում են փերիները: Այդ տարի Թունդա նենգ կախարդը խափանում է բոլորի տոնն ու վրեժխնդիր լինում իրեն պարահանդեսի չհրավիրելու համար՝ չխնայելով ոչ ոքի, անգամ սառցե հյուսիկներով սիրունիկ Զյունանուշին: Հեքիաթը, սակայն, իր օրենքներն ունի, և բարու հաղթանակն ու չարի պատժվելն անխուսափելի են:

Հնուց բազմաթիվ լեգենդներ ու ավանդություններ են մեզ հասել կռվարար քույր ու եղբոր մասին, որոնք իրենց անհաշտության համար պատժվում են: «Արեգն ու Արևահատը կախարդական աշխարհում» հեքիաթի քույր ու եղբայրն էլ ոչ մի կերպ չեն կարողանում հաշտ ապրել, և Աստված որոշում է փորձության ենթարկել նրանց, բայց քանի որ իրականում շատ էին սիրում միմյանց, անցնում են բոլոր փորձություններով ու անձնվիրաբար փրկում իրար՝ հաղթելով վիշապին, իր մահացու շնչով մարդկանց սառույց դարձնող արծվին և դաժան ու անգութ թագուհուն:

***

Որքան անավարտ գործեր մնացին, ու որքան ասելիք կա նշխարք դարձած այս գրառումների լուսանցքներում, բացիկների երեսներին, երկտողերում, որոնք մի կողմից՝ իրենց անավարտությամբ խոցելի են, մյուս կողմից՝ վկայում են առատաշնորհ պատանու անհանգիստ ու արարող բնության մասին: Ասես դալար շիվերն են, որ պետք է բարձրանային իրենց սիրուն հասակով, եթե չընդհատվեր նրանց հեղինակի շողշողուն կյանքը՝ թողնելով անջնջելի, լուսափայլ մի հուշ: Մնացին նաև անսպասելի ու անդարձ հեռացման փաստի ցավն ու անսփոփ տրտմությունը:

Ներկա հատորյակում ամփոփված է Ալեն Մարգարյանի ավարտված գրվածքների մի մասը: Լույս տեսնելով դրանք հասնելու են բազմաթիվ ընթերցողների՝ բացահայտելով այսօր շատ-շատերին ծանոթ նրա վառվռուն կերպարի դեռևս անհայտ կողմը ու գուցե մի փոքր կարճելու են այն անանց հեռավորությունը, որ բաժանում է Ալենի այլաշխարհն իր սիրելիներից:

Ալվարդ Ջիվանյան

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սիրելի՛ փոքրիկ, Ալեն Մարգարյանը (ծնված՝ 1999 թ. փետրվարի 11-ին) մի երիտասարդ էր, որը շատ էր սիրում երեխաներին, բայց ոչ միայն խաղալ և զրուցել նրանց հետ, այլև կրթել և նոր բաներ սովորեցնել: Նա շատ ակտիվ և հետաքրքրասեր տղա էր, չէր բավարարվում միայն դպրոցական առօրյայով: Հաճախում էր մի շարք խմբակների՝ պարի, թատերական, լողի և այլն: Նաև ուներ իր կարծիքը տարբեր հարցերի վերաբերյալ և մշտապես մասնակցում էր «Բանավեճի ակումբի» քննարկումներին:

Հենց դպրոցական տարիներին է նա գրել այն հեքիաթները, որոնց դու կհանդիպես հաջորդ էջերում:

Ալենը դպրոցում գերազանց էր սովորում. հուսով ենք, որ նրա օրինակին կհետևես նաև դու:

«ԹՈՒՄՈ» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի առաջին սաներից է եղել Ալենը և այդտեղ էլ հետագայում աշխատել է որպես ֆիլմերի ստեղծման դասընթացավար՝ կրթելով բազում երեխաների Երևանում, Գյումրիում և Դիլիջանում: Դասընթացներից դուրս ջերմ և ընկերական հարաբերություններ է ունեցել իր ուսանողների հետ, որոնց ոգևորել ու աջակցել է ամեն հարցում:

Ալենը շատ էր սիրում ֆիլմեր դիտել և վերլուծել. 16 տարեկանից ընդգրկվել էր «Ռոլան» մանկապատանեկան ֆիլմերի միջազգային փառատոնի ժյուրիի կազմում: Չորս փաստագրական ֆիլմի ռեժիսոր է եղել, որոնցով հայկական մշակույթը ներկայացրել է աշխարհին:

Ընտրելով կինոարվեստի ակադեմիական ուղին՝ 2016 թ. ընդունվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կուլտուրայի ֆակուլտետի ռեժիսուրայի բաժին: Համալսարանում նույնպես ակտիվ է եղել, նախաձեռնել ուսանողական միջոցառումներ:

Շատ է զբաղվել կամավորական աշխատանքով, որի ընթացքում Հռոմի պապի՝ Հայաստան այցի ժամանակ օգնել է

հյուրերին թարգմանչական հարցերում, անգամ ներկա է եղել Նոբելյան մրցանակակիրների հետ հանդիպմանը:

Ալենն ուներ արվեստի նուրբ ճաշակ և մեծ գրքասեր էր, ստեղծում էր իր սեփական գրադարանը: Սիրում էր բացահայտել նորը թե՛ Հայաստանում, թե՛ Հայաստանից դուրս և հասցրել էր լինել քսանից ավելի երկրներում:

Սիրելի՛ փոքրիկ, պատկերացնո՞ւմ ես, Ալենն այնքան ընդունակ էր և խելացի, որ բակալավրիատը կարմիր դիպլոմով ավարտելուց հետո ընդունվեց Բոստոնի համալսարան՝ լավագույններից մեկը աշխարհում: Բայց սովորելուց և ճամփորդելուց առավել Ալենը սիրում էր մեր երկիրը, դրա համար էլ որոշեց Բոստոն մեկնելու փոխարեն մնալ Հայաստանում և ծառայել հայոց բանակում:

Բանակում նույնպես Ալենն ուներ շատ ընկերներ և կիսվում էր իր գիտելիքներով նրանց հետ: Ազատ ժամերն անցկացնում էր ընթերցանությամբ:

Սիրելի՛ ընթերցող, դու դեռ փոքր ես, բայց երևի գիտես, որ մեր երկրում եղան դժվար ժամանակներ: Ալենը և իր զինվոր ընկերները պաշտպանեցին բոլորիս և վերականգնեցին խաղաղությունը: Դու պիտի միշտ հիշես և գնահատես այն տղաների քաջությունը, որոնց շնորհիվ հիմա մենք ապրում ենք:

Ալենն իր անձնվեր ծառայության համար 2021 թ. հունիսի 29-ին Արցախի նախագահի հրամանագրով արժանացել է «Արցախի հերոս» բարձրագույն կոչմանը և պարգևատրվել է «Ոսկե արծիվ» շքանշանով, «Մարտական ծառայություն» մեդալով:

Աշխարհի տարբեր ծայրերից Ալեն Մարգարյանին այցի են գալիս Եռաբլուր զինվորական պանթեոն:

Երբ մի քիչ էլ մեծանաս, քո գրադարակում տեղ կգտնի նաև «Բոլորիս Ալենը» գիրքը, որում կկարդաս, թե ինչքան ընկերասեր, աշխատասեր, գրքասեր և մարդասեր էր Ալենը: Եվ հուսով ենք, որ դու էլ կյանքում կառաջնորդվես այդ արժեքներով:

Դե ինչ, սիրելի՛ փոքրիկ, սկսի՛ր կարդալ և իմացի՛ր, որ այս գրքի հեքիաթների հերոսներին դու կարող ես հանդիպել նաև Հովի. Թումանյանի անվան պետական տիկնիկային թատրոնի բեմադրած «Դետեկտիվ Ալենը» ներկայացման մեջ: Իսկ «Մեծ գրքասերը» քանդակը՝ նվիրված Ալենին, կարող ես տեսնել բոլորիս սիրելի Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի դիմաց:

Տերևը

Աշուն էր: Սկսվել էր տերևաթափը: Ծառերը մերկանում էին և մրսում, բազմագույն տերևները, քամուց դողալով, իջնում էին ցած: Ես նայում էի սենյակիս պատուհանից ու հետևում թափվող տերևիկներին: Քիչ անց ծառին մնաց միայն մի փոքրիկ, դեղնած տերև, որը կարծես չէր ցանկանում ծառին մենակ թողնել:

Ես երկար հետևեցի նրան, հետո հանկարծ տեսա, թե ինչպես տերևիկն օրորվելով ընկավ մեր պատուհանագոգին: Հանկարծ ինձ թվաց, թե տերևը ձայն է տալիս.

— Փոքրիկ տղա, ես շատ եմ մրսում, տար ինձ տուն, խնդրում եմ:

Հենց այդ պահին հորդ անձրև տեղաց: Ես խղճացի դողացող տերևին և ներս բերեցի գրասն:



Տեսնում ուսախաղաով ու ժպտում իմացիր։

Գրեպտես, դուրգրանում կարելի է վերի գրքի վերեցի գրանց գրանց ու գրանց։

Հմիսի։

Կախարդական ծաղիկը

Կար–չկար, մի քաղաք կար: Այդ քաղաքով մի գետ էր անցնում, որի մեջ ապրում էր բարի կախարդուհին: Կախարդուհին իր համար տնակ էր ընտրել՝ ջրում լողացող մի գեղեցիկ ջրաշուշան, և ապրում էր դրա մեջ՝ երկար տարիներ առանց դուրս գալու:

Օրերից մի օր նա որոշում է դուրս գալ, շրջել երկրեերկիր և տեսնել, թե ինչպես են ապրում մարդիկ առանց կախարդանքի աշխարհում: Դուրս գալով՝ առաջինը նա տեսնում է գվարթ խաղացող, կոնֆետներ ուտող երեխաների, երիտասարդների, ապա նաև ուրախ զբոսնող տատիկ–պապիկների:

Այդ ժամանակ կախարդուհին սկսում է մտածել, որ աշխարհին կախարդանք պետք էլ չէ: Կարծում է, որ մարդիկ ապրում են անհոգ և ուրախ: Սակայն աշխարհում մի փոքր ավելի երկար շրջելուց հետո կախարդուհին նկատում է, որ երբեմն երջանիկ ժպիտների հետևում հոգսեր ու խնդիրներ են թաքնված:



Հասկանում է, որ երջանիկ լինելուց բացի՝ մարդիկ նաև տխուր են լինում:

Եվ այդ ժամանակ բարի կախարդուհին որոշում է մարդկանց օգնել իր կախարդական ջրաշուշանի միջոցով: Նա հայտնվում է բոլոր հուսահատված մարդկանց երազներում և խնդրում է գտնել իր կախարդական տնակը, որը կլուծի նրանց խնդիրները:

Այդ մասին պատահմամբ իմանում է մի ծերունի: Նա շատ հիվանդ էր ու կույր: Որոշում է գտնել ծաղիկը, մտնել դրա մեջ ու փորձել: Այդպես էլ անում է և բուժվում է: Ամբողջ աշխարհում հայտնի է դառնում, որ ծաղիկը կախարդական է և կարող է բուժել բոլորին:



Դրանից հետո շատ մարդիկ են փորձում գտնել կախարդական վճռորոշիչ ցուցակ, որտեղ հակապե՛ս հավատում են բարի կախարդների ուժին:

Աշխատասեր մեղուները

Անտառի խորքում մի պարտեզ կար՝ ծաղիկներով լեցուն: Այնտեղ ապրող աշխատասեր մեղուները օրուգիշեր խնամում էին իրենց պարտեզը, մաքրում էին այն, ջրում ծաղիկները և հետո այդ ծաղիկների քաղցր փոշուց մեղր էին պատրաստում: Փոքրիկ մեղուներն իրենց պատրաստած մեղրով կիսվում են անտառի մյուս միջատների հետ:



Սակայն մի գիշեր չար դևը
հարձակվում է մեղուների պարտեզի վրա:
Նա փչացնում է ողջ պարտեզը. արմատախիլ է
անում բույսերը, կտրտում է ծաղիկները, այրում
փոքրիկ ճյուղերը:

Սովորականի նման առավոտյան վաղ մեղուները
արթնանում են ու տեսնում, որ իրենց պարտեզն
ավերված է: Սակայն չեն տխրում ու չեն հուսահատվում:
Նրանք սկսում են ավելի ժրաջան աշխատել: Բոլոր
ծաղիկների և բույսերի սերմերը նորից են
ցանում, հոգատար խնամում են և ջրում:

Հաջորդ գարնանը այդ տեղում էլ ավելի հրաշալի պարտեզ է աճում: Նախկինում այդ պարտեզ թիթեռներ հյուր չէին գալիս: Սակայն այժմ պարտեզն այնպես էր լցվել գեղեցիկ ծաղիկներով, որ գունագեղ թիթեռնիկների սիրելի վայրն էր դարձել անտառում:

Ուշադրությունը դարձրեցինք նաև է ԳՍՄ ընտանիքում ծնողական
կոչումը, որպեսզի
պետք լինեց, որպեսզի
Ն ամատ Ն օրինակ
մեզ տվեցնեն
ուշադրությունը

Կակաչի սիրտը

Կար–չկար, մի ջրասեր կակաչ կար: Նա անհամբեր սպասում էր, թե երբ պիտի անձրև գա, որ ինքը կարողանա առատ ջուր ստանալ: Սակայն ամեն օր արևը պայծառ շողում էր երկնքում և չէր թողնում, որ թուխ ամպերը կուտակվեն, ու անձրև տեղա:



Եվ մի օր կակաչն արևին ասում է.

— Դու քո ջերմությամբ թույլ չես տալիս անձրևաբեր ամպերին երկնքում հավաքվել: Իսկ ես ամեն օր սպասում եմ անձրևին, որ պարեմ թաց հողի վրա և այնքա՛ն ջուր խմեմ, որքան ցանկանում եմ:

Այդ խոսքերից ազդված՝ հեռանում է արևը: Երկինքը մթնում է, անընդմեջ սկսում է անձրև տեղալ, սառը քամիներ են փչում:



Օրեր են անցնում: Անձրևից թրջված, մրսած և հուսահատված կակաչը այդ ժամանակ է միայն հասկանում, թե որքան հաճելի էին արևային օրերը և արևի ջերմությունը: Նա շատ է զղջում իր խոսքերի համար: Կակաչը փոքրիկ թռչուններին է օգնության կանչում, որպեսզի նրանք բա՛րձր թռչեն, գտնեն արևին և խնդրեն վերադառնալ:



Որոշ ժամանակ անց հուսահատված կակաչը հանկարծ իր թերթիկներին զգում է արևի ջերմ շողերը: Ուրախացած բարձրացնում է գլուխը, ժպտում և ներողություն խնդրում:

Այդ օրերին ամբողջ գյուղը հավաքվում էր դպրոցի հրապարակում։

Սկսվում էր տոնական համերգը։

Հնկերությունն

Լինում է, չի լինում, մի ծույլ արջուկ է լինում: Նա շատ ալարկոտ էր: Ալարում է անգամ իր համար ուտելիք հայթայթել: Երբ նա քաղցած է լինում, խնդրում է մեղուներին, որ իրեն մեղր տան: Մեղուները սիրով տալիս են:

Երբ նա կրկին սո-
վածանում է, ձկներին է
խնդրում, որ իրեն օգնեն:
Ձկները նույնպես ուտելիք տա-
լիս են: Մեկ այլ անգամ էլ ան-
տառի ծառերից է տանձ խնդրում:
Նրան դարձյալ չեն մերժում:

Այսպես անհոգ ապրում է ար-
ջուկը՝ բոլորի օգնությամբ:

Մի օր մեղուները խնդրում են,
որ արջը պաշտպանի իրենց փչա-
կը թունավոր սարդերից: Սակայն
արջը չի ցանկանում պառկած տե-
ղից վեր կենալ և գնալ օգնության:





Մի անգամ էլ ձկները խնդրում են արջին,

որ վախեցնի ձկնորսության եկած մարդկանց։

Սակայն արջը նրանց էլ չի օգնում։

Որոշ
ժամանակ անց էլ
ծառերին է օգնություն
պետք լինում՝ վայրի թռչուն
ներից պաշտպանվելու հա–
մար: Արջը նրանց խնդրանքը
անգամ մինչև վերջ չի
լսում:

Բոլորը նեղանում են արջուկից, և նա մնում է առանց ընկերների, քաղցած ու տխուր: Այդ ժամանակ է միայն հասկանում, որ ընկերները պետք է օգնեն իրար բոլոր իրավիճակներում:

Եթե ամպամասի չմոռանաք թեքվել սև ելքերը, սև ելքերում ուսուցանող է սիրելու սիմոն

Նոամկի սիմոն լսելիս մոխրագույն մեղմորեն։

Հարուստն ու խնամատարը

Շա՛տ դարեր առաջ Յուգոդա քաղաքում մի հարուստ վաճառական էր ապրում: Նա շատ գոռոզ էր, մեծամիտ և ամենից առավել ոսկին էր գնահատում:

Վաճառականի հարևանությամբ ապրում էր մի ալեհեր իմաստուն: Նա բժիշկ էր և քանի որ բոլորին առանց վճարի էր բուժում, շատ աղքատ էր: Վաճառականը անհարգալից էր վերաբերվում անգամ իրենց գահակալի ամենաիմաստուն բժշկին, որովհետև նա աղքատ էր:

Մի օր վաճառականը հիվանդանում է: Աշխարհի տարբեր կողմերից շատ իմաստուններ են հավաքվում: Ներկա է լինում նաև Յուգոդա քաղաքի իմաստունը: Վաճառականն իր առողջության համար մեծ պարգևներ, թանկարժեք գարդեր է խոստանում: Իմաստուններից շատերն են փորձում իրենց դեղաբույսերով բուժել վաճառականին, սակայն ապարդյուն, և նրանք հեռանում են Յուգոդայից:

Երբ հերթը հասնում է քաղաքի իմաստունին, նա ասում է.

— Եթե ցանկանում ես բուժվել, պետք է այլևս երբեք չգոռոզանաս: Եվ պիտի դառնաս համեստ, մարդասեր ու հանդուրժող:

Հիվանդը, հասկանալով իր սխալը, փոխում է վերաբերմունքը մարդկանց նկատմամբ: Եվ ծերունին իր պարտեզից մի ծաղիկ է քաղում ու դրանով բուժում վաճառականին:

Պետք է, պիտի հիշեք, որ գոռոզությունը մեծ արատ է։

Սիրելի՛ ընկերներ, եթե չեք ցանկանում հանդիպել խստագույն դատաստանի

Արեգն ու Արևահատը կախարդական աշխարհում

Արեգն ու Արևահատը քույր ու եղբայր էին: Նրանք շատ անհաշտ էին, և ամեն մեկն իրենն էր պնդում, բայց ոչինչ չէր ստացվում: Աստված տեսնում է, որ նրանք համերաշխ չեն, և որոշում է նրանց ստուգելու համար հինգ փորձության ենթարկել: Մի գիշեր, երբ Արեգն ու Արևահատը պառկեցին քնելու, երկուսն էլ քնի մեջ հայտնվեցին կախարդական աշխարհում:

Առաջին փորձությունը սկսվեց մի գեղեցիկ այգում, որտեղ շատ պտղատու ծառեր կային:

Արևահատն ու Արեգը մոտեցան մի կեռասենու: Արևահատը շատ էր ուզում փորձել կարմրաթուշ կեռասներից: Նա ծառի ճյուղից մի պտուղ պոկեց և անուշ արեց: Այդ պահին անտառի խորքից հինգգլխանի վիշապը տեսավ, որ իր այգու ծառից մի աղջիկ կեռաս կերավ: Վիշապին տեսնելով՝ Արևահատը վախից քարացավ տեղում:

— Մի՛ վախեցիր, Արևահա՛տ, ես կհաղթեմ հինգգլխանի վիշապին,— ասում է Արեգը:

Արեգը սովորություն ուներ քնելիս իր խաղալիքները դնել բարձի տակ կամ շարել անկողնու մոտ: Պարզվում է, որ երբ նրանք երազում հայտնվում են կախարդական աշխարհում, խաղալիքները նույնպես նրանց հետ էին, որպեսզի օգնության հասնեն փորձությունների ժամանակ:

Եվ ահա բարձի տակ դրված պսպղուն խաղալիք թուրը դարձել էր իսկական սրածայր մի թուր, և Արեգը հե՛նց դրանով կռիվ տվեց հինգգլխանի վիշապի հետ: Վիշապի սրտից մի կաթիլ արյուն ընկավ Արևահատի գոգը: Կաթիլի տեղում իսկույն հայտնվեց հեքիաթների մի գիրք: Արևահատը գրկեց եղբորը և շնորհակալություն հայտնեց

իրեն փրկելու համար: Հետո բացեց գիրքը և առաջին էջին տեսավ մի արծվի պատկեր:

Արեգը նույնպես ուզում էր թերթել գիրքը, երբ վրա հասավ երկրորդ փորձությունը: Նրանք վիշապի այգուց հայտնվեցին մի անապատում: Այդ անապատը սովորական չէր, այնտեղով շատ առվակներ էին հոսում, և տարօրինակ էր, թե ինչու էր այն «անապատ» կոչվում:

Արևահատը գնում է մի առվակի մոտ, որը ցանկապատված էր: Այնքան ծարավ էր, որ անհամբերությամբ բացեց ցանկապատը և մի քիչ խմեց այդ ջրից: Հանկարծ գլխավերևում հայտնվեց հեքիաթների գրքի այն արծիվը: Արծիվն էլ սովորական չէր: Երբ այդ արծիվը փչում էր, սառնամանիք էր սկսվում: Արծիվը մեկ անգամ փչեց ուղիղ Արևահատի վրա: Արևահատը սառցակալեց:

Այս անգամ էլ Արեգին օգնության հասավ իր պարանը. երազում այն նույնպես թրի նման կախարդական էր դարձել: Արեգը պարանը նետում է վեր, արծվի վզից քաշում և խեղդում նրան: Արծվի ընկնելուց ահեղ դղրդյուն է բարձրանում: Անապատի ամբողջ ավազը բարձրանում է՝ ներքևում թողնելով բոլոր ջրերը: Ահա թե ինչու էր երազում այն «անապատ» կոչվում:

Հաջորդ փորձությունը տեղի է ունենում մի ժայռի վրա:

Հանկարծ Արևահատի ոտքը սայթաքում է, և նա մնում է ժայռի



ծայրից կախված: Արեգն իր հետ երազ էր տարել նաև իր ամենասի-
րելի խաղալիքներից մեկը՝ նետն ու աղեղը: Նա իր մոտ եղած աղեղը
երկու կես է անում և մի ծայրը նետում է ներքև: Աղջիկը, այդ աղեղից
բռնելով, բարձրանում է:

Ճնչակտուր Արևահատը հուզվում է: Նա չգիտեր՝ ինչպես շնոր-
հակալ լիներ եղբորը, միաժամանակ հպարտանում էր, որ այդքան
ուժեղ տղա է Արեգը:

Նրանք կանգնած էին մի քարի վրա, որը շատ մեծ էր և ան-
վտանգ: Սակայն պարզվում է՝ երբ դիպչում ես այդ քարին, այն երկու
կես է լինում:

Նրանք ընկնում են ներքև: Սկսվում է չորրորդ փորձությունը՝
արդեն կրակների աշխարհում: Նրանց հաջողվում է փախչել կրա-
կե ալիքներից, բայց ընկնում են ջրի մեջ: Քանի որ Արեգը մասնակ-
ցում էր դայվինգի պարապմունքների, շատ հմուտ էր սուզվում:

Երեխաները հայտնվում են ստորջրյա մի շա՛տ-շա՛տ գեղեցիկ քա-
ղաքում: Նրանք այդ քաղաքում հանդիպում են միաչքանի մարդու: Այդ
մարդը նրանց ուղեկցում է չար թագուհու մոտ: Չար թագուհին ասում է.

— Ես ինչ փորձություն էլ կազմակերպեմ, Արևահա՛տ, միևնույնն է,
քո եղբայրը կկարողանա փրկել քեզ, դրա համար հիմա կմտածեմ,
թե ինչպես անեմ, որ այս անգամ էլ Արեգն ունենա քո օգնության կա-
րիքը, իսկ դու ոչինչ չկարողանաս անել, հա՛, հա՛, հա՛, հա՛:

Կախարդ թագուհին որոշում է տղային այրել խարույկով: Արևահատը շատ էր սիրում եղբորը և չգիտեր ինչ անել: Տեսնում էր, թե ինչպես են պատրաստում խարույկը, և լաց էր լինում:

Ամեն գիշեր՝ քնելուց առաջ Արևահատը ջուր էր դնում իր կողքին, որովհետև հաճախ էր ծարավում և արթնանում:

Բարեբախտաբար, հենց այդ մեկ բաժակ ջուրը Արևահատի արցունքների հետ միասին երազում վերածվեց անվերջանալի մի վարար գետակի և հանգցրեց կրակը:

Արեգն ու Արևահատը արթնանում են այդ կախարդական երազներից: Տեսնում են, որ թուրն էլ է տեղում, պարանն էլ, բաժակով ջուրն էլ:

Գրվում են իրար և այդ օրվանից շատ համերաշխ են ապրում.

Գրանք հասկանում են, թե ինչքան թանկ են իրար համար:

Լեգենդ ամանորյա կախարդանքի մասին

Բոլորին է հայտնի, որ Ամանորի գիշերը տարվա ամենակախարդական, ամենալուսավոր գիշերն է: Բայց քանի որ ոչ բոլորը գիտեն նախատոնական պարահանդեսի մասին, ես կպատմեմ:

Ամեն տարի Ամանորի շեմին փերիները պատրաստվում են պարահանդեսի, որի հիմնական հերոսներն են՝ թագավորը, թագուհին, արքայազնը, արքայադուստրը, յոթ հրեշտակները, փերիները և ծաղրածուները:

Ահա ժամացույցի սլաքը երեկոյան ութի վրա էր: Բոլորը պատրաստվում էին, շքեղ զգեստավորվում, նվերներ պատրաստում: Բայց հանկարծ երևաց Թունդան՝ չար կախարդը: Նա հրավիրված չէր պարահանդեսին, դրա համար էլ որոշեց փչացնել տարեմուտի հրաշալի սառցե երեկույթը: Նա կարողացավ մարել լույսերը, լռեցնել ուրախ մեղեդիները՝ վերացնելով կախարդանքը:

Փերիները հասկացան, որ չորս ժամ ունեն այն վերադարձնելու համար:

Նրանք իջան անտառ՝ փնտրելու Թունդայի ամրոցը, որպեսզի զրուցեն և համոզեն նրան վերադարձնել կախարդանքը մինչև կեսգիշեր:

Անտառում մի տուն տեսան, որի մուտքին օձ էր փաթաթված, և ենթադրեցին, որ հենց դա է կախարդ Թունդայի տունը:

Փերիները պատուհանից զգուշորեն տուն մտան, բայց, ավա՛ղ, Թունդան այնտեղ չէր: Նա գնացել էր Զյունանուշին խանգարելու, որ նրանք էլ չկարողանան մասնակցել պարահանդեսին:

Ժամացույցի սլաքն ինների վրա էր: Թունդան կրակե բոց արձակեց Զյունանուշի վրա, և նրա սառցե գեղեցիկ հյուսիկները հալվեցին, ջուր դարձան:

Երբ կախարդը վերադարձավ իր տուն, փերիներն արդեն հեռացել էին: Ժամը տասն էր, փերիներն իրենց պալատի ճանապարհին էին: Երկու ժամը քիչ էր:

Փերիներից մի քանիսն իմացան Զյունանուշի հետ կատարվածի մասին, գնացին նրա մոտ՝ մխիթարելու, իսկ մեկը մնաց հսկելու քարացած թագավորին, թագուհուն, արքայազնին և արքայադստերը:

Ծուտով ժամը տասնմեկը կլիներ: Հանկարծ իր եղնիկներով սառցե պարահանդեսի վայր ժամանեց Զմեռ պապը:

— Ո՞ւր է իմ թոռնիկը՝ իմ փոքրիկ Զյունանուշը, ո՞ւր են փերիները, ո՞ւր են երջանիկ թագավորն ու թագուհին…

Միակ փերին, որ կարող էր պատասխանել Զմեռ պապին, հուզմունքից միայն կարողացավ ուսերը շարժել:

Զմեռ պապը հասկացավ, որ ժամանակ չկա պարզելու, թե ո՛վ է այս ամենը փչացրել, փոխարենը միանգամից իր կախարդական գավազանով բոլորին շունչ տվեց, վառեց լույսերը, և սկսվեց գունագեղ պարահանդեսը:

Երբ բոլորն ուրախ ու երջանիկ աղմկում էին, ծափահարում Զմեռ պապին, հենց այդ պահին էլ Զյունանուշը, փերիների հետ պարելով, ներս մտավ: Ամեն բան վերականգնվել էր, Զյունանուշը նորից ուներ գեղեցիկ սառցե հյուսիկներ:

Փերիները մեծ պատվի արժանացրին Զմեռ պապին տարեմուտի կախարդանքը վերակենդանացնելու համար: Բայց ոչ ոք չուզեց պատմել Թունդայի մասին և վնասել նրան, քանի որ ամենակարևորն այն էր, որ իրենք հասցրին ուղիղ ժամը տասներկուսին վայելել Ամանորի գիշերը:

Այս հեքիաթը մեզ սովորեցնում է, որ երբեք չհանձնվենք և հավատանք, որ բարին հաղթում է չարին:

Այնպես հաղորդակցվում է.

Այնպես՝ իր սիրելի ընթերցողներից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 5
Կենսագրություն 8
Տերևը 10
Կախարդական ծաղիկը 15
Աշխատասեր մեղուները 21
Կակաչի սխալը 27
Ընկերություն 35
Հարուստն ու իմաստունը 45
Արեգն ու Արևահատը կախարդական աշխարհում 53
Լեգենդ ամանորյա կախարդանքի մասին 63

Բոլորիս Ալենի
ՉԵՔԻԱԹՆԵՐԸ

Մտահղացման հեղինակ՝ Ալենի մայր Նազելի Տերտերյան
Նկարազարդումը՝ Ասյա Ղանդիլյանի

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Գրական խմբագիր՝ Ալվարդ Ջիվանյան
Գեղարվեստական խմբագիր՝ Մարիամ Կանայան
Տեխնիկական խմբագիր՝ Նվարդ Փարսադանյան
Վերստուգող սրբագրիչ՝ Նարինե Ղուկասյան
Խմբագիր՝ Շողակաթ Դևրիկյան
Սրբագրիչ՝ Վանուհի Եղիշյան
Ձևավորումը և էջադրումը՝ Նելլի Ադամյանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափը՝ 70×100/12
Թուղթը՝ կավճապատ: Ծավալը՝ 6 տպ. մամուլ

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23–25–28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak